Բաժնի պետը

1. Ապահովում է ՀՀ Վայոց ձորի մարզի (այսուհետ՝ Մարզ) սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի մշակման, ծրագրերի նախագծերի քննարկման համար անհրաժեշտ փաստաթղթերի, զեկուցման նյութերի և համապատասխան որոշման նախագծերի պատրաստման աշխատանքների կատարումը.
2. Ապահովում է Մարզի սոցիալ-տնտեսական (ըստ ճյուղերի և բնագավառների) զարգացման ռազմավարության և հիմնադրույթների մշակման աշխատանքները.
3. Ապահովում է Մարզի համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի վերլուծության, ծրագրերերի կատարման ընթացքի և արդյունքների վերլուծության աշխատանքները.
4. Ապահովում է մարզի համայնքներից ներկայացվող սուբվենցիոն ծրագրերի համակարգման, ծրագրերի իրականացման գործընթացի վերահսկման աշխատանքները:
5. Ապահովումէ փոքր և միջին ձեռնարկությունների ոլորտով զբաղվող նախարարությունն երի, գերատեսչությունների, մարզային կառույցների և հասարակական կազմակերպություն ների միջև համագործակցությունը.
6. Ապահովում է Մարզի փոքր և միջին ձեռնարկությունների և ձեռնարկատիրական համակարգի աշխ ատանքների մասին տեղեկատվության ստացման և վերլուծության աշխատանքների կատարումը.
7. Ապահովում է Մարզում զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության իրագործման աշխատանքները.
8. Ապահովում է զբոսաշրջության ոլորտի գրանցամատյանների կազմման, վարման, թարմացման, վարչական ռեգիստրի ներդրման և տեղեկատվական բազայի ստեղծման գործընթացներին Բաժնի մասնակցությունը.
9. Ապահովում է այլ երկրների համապատասխան մարմինների և միջազգային զբոսաշրջային կազմակերպությունների հետ հարաբերություններում Մարզը ներկայացնելու, բանակցային գործընթացի իրականացման, զբոսաշրջային բնագավառում մարզին վերաբերող համագործակցության փաստաթղթերի, ծրագրերի մշակման աշխատանքները.
10. Ապահովում է նոր արդյունաբերական կառույցների և հանգույցների գործունեության հաշվառումը և նրանց կապը շուկայի հետ.
11. Ապահովում է Մարզի սոցիալական աջակցության պետական ծրագրերի իրականացմա ն աշխատանքներին Բաժնի մասնակցությունը.
12. Ապահովում է Մարզի ընթացիկ և հեռանկարային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի նախագծերի կազմման աշխատանքները.

13. Ապահովում է Բաժնին վերապահված լիազորությունների շրջանակներում Մարզի տարածքում մարզային համապատասխան ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքների իրականացումը.
14. Ապահովում է Մարզի քաղաքացիական պաշտպանության բնագավառում Բաժնին վերապահված գործառույթների իրականացումը: